

բազիր սերտորէն միացած են: Անտարա-
կոյս վսեմ գաղափարներու տէր անհատ
մը կրնայ ունենալ յոռի վարք մը, ճշմա-
րիտ բարոյագէտներ կը դառնան երբեմն
ճարտարարուեստից ասպետներ, որովհե-
տեւ պատկերն ու գաղափարները ստա-
ցուած են երբ Չլային դրութիւնը կորու-
սած է իր կերպընկալութիւնը: Չմոռնանք
նաեւ թէ որքան հեշտ է ստանալ գաղա-
փարներ, որքան դժուարին՝ հակազդել ժա-
ռանգական բնազդներուն դէմ: Եթէ գա-
ղափար մը կը ձգտի արտայայտուելու,
ուրիշ հակընդդէմ գաղափարներ չեն գտ-
նուիր, կիանքի վարմունքն ու գործու-
նքները կը վերածուի կրթական հարցի
մը, որուն լուծումէն կախում ունէր և
ունի ընկերային հարցը: Արդիւնէլ անհատը
գերին դառնալու ստացուած ամէն գաղա-
փարներու և հակազդելու միջավայրին, մէկ
խօսքով ինքզինքին տէր դարձնել, անս-
կարելոր խնդիրը դաստիարակութեան: Ան-
հատը դպրոցէն պատրաստուելու է կեանքի՝
պարհլով իրական կեանք մը, ո՛չ թէ մե-
կուսանալով իրեններէն, կեանքէն: Նախ-
կին դաստիարակութիւնը մեղանչեց այս
սկզբունքին դէմ, և հոս փնտռելու է ըն-
կերային չարախոնջութեան պատճառներէն
մէկը: Միջին դարուն մէջ դաստիարակու-
թիւնը ոչ ուղիղ ներշնչուած հարազատ
բրիտանիկութենէն՝ անձը կը նկատէր կըղ-
զիացած, արհամարհելով ներկայ կեանքը՝
կը պատրաստէր անգրէլիմեան կեանքին,
անգոսնելով մարմինը՝ կը զբաղէր հոգեւ-
փոխանակ պատրաստելու անհատը կեանքի
խոչընդոտներուն յաղթելու, ինքզինքին
վստահելու, այդ դաստիարակութիւնը կը
վստահացնէր կեանքին երազ մը ըլլալը
և յետոյ տեղաւորելու իւրաքանչիւր աշա-
կերտ: Խիստ կարգապահութիւն մը կը
հրամայէր հնազանդելու դիակի մը նման
(perinde ac cadaver) գուրկ հետեալաբար
պատասխանատուութեան ոգիէ, նախա-
ձեռնութենէ, կորովէ, որոնք անհրաժեշտ
յատկութիւններ են յաջողելու և հետեա-
լաբար չամբաստանելու ընկերութիւնն իրրեւ
աղբիւր ամէն չարեանց: Դաստիարակու-

թեան այդ ոգին ներշնչուած էր համան-
քային կազմակերպութենէն՝ ինչպէս ընտա-
նիքը նահապետական: Անհատը կը վերա-
բերէր համայնքին, ընտանիքին: Գեղեցի-
ք, ընտանիք և դպրոց նեցուկներն էին ան-
հատին և ժամանակի մը մէջ, ուր տնտե-
սական պայմանները ծանր չէին, պէտքերը
սահմանափակ: Աւատապետ և ճորտ փո-
խադարձ կապերով սերտորէն միացած
աւելի կը դիրքացնէին յարաբերաբար այդ
պայմանները: Յեղափոխութիւնը խզեց այդ
բոլոր կապերը, խորտակեց անհատին նե-
ցուկները: Ռաւմակապետական սկզբունքները
ներշնչեցին իւրաքանչիւրին բարձրանալու
տենչը, աւելցուցին պէտքերը, առանց հայ-
թաթիւլու զանոնք գոհացնելու միջոցները:
Ահա՛ անջրպետ մը խոհային և իրականու-
թեան մէջ, ուրկէ յոռետեսութիւն, վհա-
տութիւն և ընկերային խաղաղութեան
վրդովում:

ԽՈՐԷՆ ԳԵԼԿԻՆԱՆ

(Շարունակելի)

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԾԱՆՈթՈՒԹԻՒՆԲ

ՈՎԿԻԱՆՆԵՐՈՒ ԱՂԻՈՒԹԻՒՆԸ

Ովկիանոսները հաւասար չափով աղային ջուր
չունին. Հնդկային ովկիանոսը կը պարունակէ
34 կրամ և քառորդ աղ՝ լիդրոյ մը ջուրին մէջ.
- Խաղաղականը 34,9. - Ատլանդեանը գրեթէ
35,5. այս բարձր աստիճանը տարբորնակ կը
թուի, վասն զի Ատլանդեանի մէջ է որ աշխար-
հիս մեծագոյն գետերը կը թափին, Սան Լորեն-
ցոյ, Միսիսիփի, Օրենոգոյ, Ռիոյ Ամազոնեանց,
Բելգոյ, Գոնկոյ և Եւրոպայի ուրիշ շատ մը
գետեր: Այս փոփոխականութեան բացատրու-
թիւնը տրուած է գերմանացի գիտնականի մը
կողմէ. պատճառ կը նշանակէ՝ որ Ատլանդեանի
ծովափները գրեթէ ամէնքն ալ հարթ են, որով
և շոգիները որ յառաջ կու գան այս ովկիանոսին
մակերևոյթին վրայ՝ անկէ շատ հեռու կը խոտ-
նան և կը վայրատուզուին:

ԻՆՉ ԳԻՆ ՏՐՈՒՄԱՆ ԵՆ ՆԵԱՆԱՌՈՐ ԵՐԿԵՐՈՒ

Հոմերոս, Կ'ըսուի որ, ամենէն բախտաւորն էր էն մին եղած է, վասն զի ի վարձ իլիականի կամ Ողիսականի կտորի մը մէջտ հիւրընկալու թիւն կը գտնէր իր ժամանակակիցներուն մօտ: Միտոն՝ Կրախտ Կորուսեալի համար ընդունեցաւ 5 սղերիլին: Կուլտիմիդ՝ բախտէն լաւագոյն պաշտպանութիւն գտնելով՝ 50 սղերիլին ծախեց «Ուէյթֆիլտի Աթոռակալը»: Պերանժէ՝ շնորհելով իր ամբողջական գործերուն սեփականութիւնը՝ ընդունեցաւ իր տպագրիչէն ցկեանս տաւրեկան եկամուտ մը 800 Ֆրանքի: Պալաք, ինչպէս ծանօթ է, թէպէտեւ երկասիրութեանց մեծ թիւ մ'ունէր՝ միշտ գէշ շուրթերու մէջ նաւարկեց, այնպէս որ խանութ մը բանաւոր զաղափարն ունեցաւ լայնափողոցին վրայ՝ հետեւեալ նշանով. «Զարգուած Պալաք, փերեակ» (droghiere).

ԱՆԹԵՆԼ ՀԵՌԱԳԻՐԸ ԶԿՆՈՐՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հիւսիսային ծովուն մէջ անթել հեռագիրը յարմարացուած են ձկնորսութեան արուեստին, Գլխաւոր գործիքը – որ զետեղուած է մասնաւոր նաւակի մը մէջ – նշան կու տայ ձկնորսներու կազմ ու պատրաստ նաւակներուն՝ հազիւ թէ հետուն նշմարուի աղէկ աւարի մը կարելիութիւնը: Դեռ նորերս այս միջոցով մէկ օրուան մէջ 25 տակառաւափ ձուկ որսացուած է:

ՏԱՐՈՐԻՆԱԿ ԿՏԱԿՆԵՐ ԹԱՎԱԿԻՐՆԵՐՈՒ

Շատ թագաւորներ իրենց մահուան պահուն տարօրինակ տրամադրութիւններ րրած են: Մաքսիմիլիանոս կայսրը (մահած 1519ին) հրամայեց որ ակառնները փրցնեն իր դիակին վրայէն և յետոյ դնեն շմորած կրով լեցուած սովորական դագաղի մը մէջ: Հուսկ՝ իր մագերես – լաւ մը գեթեւէ վերջ – և իւր ակառնները այրուին ամենուէն դիմաց: — Ռիքարտ դուքս Նոյմանտիոյ (մահած 996ին) պատուիրեց որ թաղեն գերեզմանի մայր եկեղեցւոյն դրան տակ, «որպէս զի ոտնակոխուի բոլոր հաւատացեալներէն»: — Շաղէ գաւառակին մէկ իշխանը՝ ընդհանրէն » — Շաղէ գաւառակին մէկ իշխանը՝ ընդհանրէն » ուզեց որ իր մարմինը գետեղեն ուղղահայեաց կերպով ուրմի մը մէջ, որպէս զի

գոհհիկները չկոխեն փորին վրայ!..: Եղուարդ Ա. Անգղիոյ՝ պարտուելով սկոտլանդներէն՝ շատ անգամ ուզեց որ եռացնել տրուի իր դիակը, ու թաղեն միսերը և ոսկրները դրուին արկղիկի մը մէջ և տարուին անգղիացի գէնթերուն ետէն, որպէս զի «գէթ ոսկրները տեսնեն պարտուած սկոտլանդները»: Եղուարդ Բ. իր որդին կարելուութիւն չուտաւ այս կամքին, և աւելորդապաշտ ժողովուրդը այդ անհնազանդութեան մէջ տեսաւ վերահաս աղէտներուն պատճառը: — Աւելի զազանաբարոյ եղաւ Աւստրիկիլտ թագուհին, որ իր թագաւոր ամուսինէն թոյլտուութիւն ստացաւ իր մօտը ողջ ողջ թաղել տալու այն երկու բժիշկները՝ որոնք զինքը խնամած էին:

ԱՆԵՆԱՐ ՀԻՍ ԵՐԱՅՆԸ ԻՆԴԵՆԱՐԺՈՎ

Պերլինքէն անցած է վանտերուէլ ամերիկացի գնդապետը իր տիկնոջ հետ: Գնդապետը երեք տարիէ ի վեր ձեռք զարկած է ինքնաշարժով աշխարհիս շրջանն ընելու, յաղթելու համար միլիոն մը տոլլարի գրաւին: Մինչև հիմայ ան կտրած է միեւնոյն կառքով Հիւսիսային և Հարավային Ամերիկա, Սպանիա, Բուրգուալ, Ալգերիա, Հոլանտա և Սկանտինաւիա: Պերլինքէն պիտի երթայ Մոսկուա և Ռուսաստանէն ճգնուի Ուղեորները որպէս զի կարենան ապրիլ՝ կը կատարեն ճամբորդութեան ժամանակ ճառախօսու թիւններ և շարժապատկերի ներկայացումներ:

ԲՈՅՍԵՐԸ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

Ամերիկացի գիտնական մը դիտեր է, թէ կա նաչ բոյսերէն մեծագոյն մասը աւելի արագ կ'աճին երաժշտական ձայներու միջոցով: Արիկա փորձն րրած է՝ դնելով բոյս մը այն դաշնակին վրայ՝ ուր տղիկ մը հրահանգներ կ'ընէր. ուրիշ նման բոյս մ'ալ կը դնէ գրասեղանին վրայ: Արդիւնքն այն կ'ըլլայ՝ որ առաջինը կրկին աւրագութեամբ աճած է քան երկրորդը: Աստի կ'անդրադառնայ ինքն ալ, որ զգացողական կարողութիւն մը ծաղիկը կը բանայ՝ երբ նուագուէին պարզ ու քաղցր երաժշտական դարձուածքներ (trase), և կը գոցեր՝ հազիւ թէ լսուէր անհամաձայն (dissonanza) մաս մը:

* * *